ՀԵՂՈՒՐԴԿՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ

ՀՐԱՄԱՆ

ՀԵՂՈՒՐԴԿՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵՈՒՄԻ

ՎԱՌԵԼԻՔԻ ՏՆՏԵՍԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1937 թվի մայիսի 7-ի *№ 101/ա*

385
Խ-11

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԱՆԴՐԿՈՎԿՍՅԱՆ ՅԵՐԿԱԹԳՏԻ
ԹԲԻԼԻՍԻ 1937

ՀԵՂՈՒՐԴԵԿՑՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

06 APR 2010

385
Խ-11

ՀՐԱՄԱՆ

ՀԵՂՈՒՐԴԵԿՑՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻ

ՎԱՌԵԼԻՔԻ ՏՆՏԵՍԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1937 թվի մայիսի 7-ի *№ 101/a*

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՅԵՐԿԱԹԳՈՒԻ

ԹԲԻԼԻՍԻ 1937

55.143
11 SEP 2013

Տեխն. խմբ. և թողարկիչ՝ Մ. ՇԱՏՎՈՐՅԱՆ
Սրբագրիչ՝ Ռ. ՊԱՊՈՎՅԱՆ

ՀՍՍՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՀ-ՍՍՀ
1479
37

Պատվեր № 3316 Գրավիտ № а—19010 Տիրաժ 500

Վրաստանի Կ(բ)Կ Կենտկոմի «Զարյա Վոստոկա»-ի հրատար.
Ա. Ֆ. Մյասնիկյանի անվան Կարմրադրոշ տպարան

ՎԱՌԵԼԻՔԻ ՏՆՏԵՍԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վառելիքի խոշորագույն սպառողներից մեկը մեր երկրում երկաթգծի տրանսպորտն է, բայց չնայելով այս կարևորագույն հանգամանքին, երկաթգծում վառելիքի ոգտագործման հարցերին ցույց են տալիս անտարբերություն, իսկ մի շարք դեպքերում ուղղակի հանցագործ վերաբերմունք։ Ցավ իրրև հետևանք այս բանի, երկաթգծերը սահմանված պետական նորմերի նկատմամբ, կատարում են վառելիքի գերածախսում։

Մանավանդ վառելիքի խոշոր գերայրում են կատարել սահմանված նորմերի նկատմամբ 1936 թվի IV եռամսյակում և 1937 թվի փետրվարին հետևյալ գծերը՝ Մոսկվա—Դոնբասինը՝ 43,7%-ով, Ոդեսայինը՝ 27,8%-ով, Հարավ-Արևմտյանը՝ 22,5%-ով, Ստալինգրադինը՝ 22%-ով, ընկ. Կ. Ցե. Վորոշիլովի անվան գիծը՝ 31%ով, Աշխարհագինը՝ 30%-ով և ընկ. Ֆ. Ե. Ջերժինսկունը՝ 19%-ով։

Այս գծերի առանձին դեպոներում վառելիքի գերայրումը հասնում է ահագին չափերի. որինակ, Մոսկվա—Դոնբասյան երկաթգծի Ցելից դեպոն ունի մինչև 64% վառելիքի գերածախսում, Ստարի-Ոսկոլ դեպոն՝ մինչև 64%, Հարավ-Արևմտյան երկաթգծի Ժմերինկա դեպոն՝ մինչև 18,3%, Շեպետովկայի դեպոն՝ մինչև 24,1%, Ստալինգրադի երկաթգծի Ստալինգրադ դե-

պոն՝ մինչև 27,3%, Մորոզովսկու դեպոն՝ մինչև 24,8%, Ոդեսայի գծի Ոդեսա դեպոն՝ մինչև 60,5%, Պոստիշևո դեպոն՝ մինչև 48,7%, ընկ. Կ. Յե. Վորոշիլովի անվան գծի Տիխորեցկայա դեպոն՝ 48,8%։

Վառելիքի ծախսի գործը բարվոք վիճակի մեջ չէ նաև ստացիոնար կառուցվածքներում։ Այսպես, որինակ, 1936 թվի IV յեռամսյակում նորմերի նկատմամբ այլանդակ դերայրում է տեղի ունեցել. Հարավ-Արևմտյան կաթսային կառուցվածքներում՝ 156%-ի, ընկ. Վ. Մ. Մոլոտովի անվան կաթսային կառուցվածքում՝ 128%-ի, Յարոսլավյան յերկաթգծի ելեկտրակայաններում՝ 63,5%-ի, Արևելա-Սիբիրյան ջրմուղներում՝ 41%-ի, Տաշկենտի գծի նորոգման կառուցվածքների՝ 71%։

Ըստ եության տեղի յեն ունենում վնասարարական խոսակցություններ, թե տեխնիկական արագության մեծացումը, ամբողջական ավտո-արգելակման մուծումը, կաթսաների հողմափչումը (продувка), ստոկերային ջեռուցման մուծումը և այլն անխուսափելիորեն պետք է մեծացնեն վառելիքի ծախսը, չնայած, որ մեր լավագույն մեքենավարները վաղուց են ջախջախել այդ ձևի խոսակցությունները։

Ճանապարհների, շոգեշարժային սպասների բաժինների և դեպոների պետերը, թույլատրելով վոչ մի կերպ չարդարացող վառելիքի գերածախսում, փոխանակ վառելիքի տնտեսման համար պայքարելու և կանոնավորելու վառելիքային տնտեսությունը, դիմում են հակապետական միջոցների, պահանջելով ՃՀԺԿ-ից վառելիքի ծախսման չափերի ավելացումն։

Այս տարվա ապրիլին տեղի ունեցած շոգեշարժայինների խորհրդակցությունը հաստատեց, որ վառելիքի գերայրման հիմնական պատճառները սրանք են. շոգեշարժային սրահի տաք վիճակով ավելորդ պահելը, այդ սրահի անսարք վիճակը, ջերմատեխնիկական տեսակետից շոգեշարժերի անբավարար սպասարկումը և շոգեշարժերի անբավարար շահագործումը։

Ամենաշուտափույթ կերպով պետք է վերջ տալ այս այլանդակությանը։

Հրամայում եմ՝

I. ՎԱՌԵԼԻՔԻ ՆՈՐՄԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

1. Սահմանել բոլոր ճանապարհներում 1937 թվի 2-րդ յեռամսյակի համար վառելիքի ծախսման իրրև գերագույն նորմեր 10.000 տոննա/կմ-բրուտտո, իսկ 1937 թվի համար՝ հավելվածի համաձայն։ 2-րդ յեռամսյակին ցանցում վառելիքի ծախսն իջեցնել 8,0 տոկոսով և 9 տոկ. 1937 թվին՝ հանդեպ 1937 թվին վառելիքի փաստական ծախսի։

Շոգեշարժային սպասի պետերին պարտավորել այս նորմերն արծարծել ըստ դեպոների, շոգեշարժային առանձին շարակարգերի և ուղղություններին, ի նկատի ունենալով գնացքների կշիռն ու գծի պրոֆիլը։ Նորմերը հաստատվելու յեն ճանապարհների պետերի կողմից։

2. Պարտավորել ճանապարհների պետերին բոլոր ստացիոնար կառուցվածքներում վառելիքի ծախսն իջեցնել վոչ պակաս, քան 10%, ընդդեմ 1936 թվի համապատասխան ժամանակաշրջանի։

3. Ճանապարհների պետերին պարտավորել բոլոր

ստացիոնար կառուցվածքների համար սահմանված նորմերը հասցնել մինչև վառելիքային պահեստը և մինչև վառելիքի անմիջական ծախսողները։

II. ՎԱՌԵԼԻՔԻ ԾԱԽՍԸ ԿՐՃԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Դեպոների պետերին անձնապես, շոգեկախտային վարպետների և ջերմատեխնիկների հետ միասին պարտավորել հերթական վողողումների միջոցին՝ զննել շոգեշարժերի կամարաձև կամարները (арочные своды) և կարգի բերել այնպես, ինչպես սահմանված է ՀՃԺԿ-ի ստանդարտով։

2. Ապահովել կրակակալի (колосник) քիպ կպչումը (плотное прилегание) հրատուփի պատերի հետ։ Այս նպատակով, յեթե չկան հատուկ կրակակալներ, տաշել ծայրի կրակակալների դարակները, վորի շնորհիվ կրակակալներն ավելի սեղմ են կցարկվում կողքի պատերին։ Կրակակալի ձողացանցի (решетка) և հրատուփի հատակի և աջևի պատերի միջի արանքները փակել թիթեղյա յերկաթի շերտերով։

3. Դեպոների պետերին պարտավորել, յուրաքանչյուր վողողման միջոցին կազմակերպել պողպատե խողանակներով հրատուփի պատերի և առաստաղի մաքրում, ապահովելով աշխատող բանվորին մաքրելու միջոցին դազդիմակով։

4. Դեպոների պետերին պարտավորել, իբրև կանոն, յուրաքանչյուր վողողման միջոցին դիտել մրամաքրիչները և վերջիններս փորձարկել ավադ մեքենավարի ներկայությամբ։

Շոգեշարժային տնտեսության կենտրոնական վարչության տեխնիկական բաժինը պարտավորվում է մշակել մինչև ս. թ. հունիսի 1-ը հզոր գնացքային շոգեշարժերի վրա մրամաքրիչ կառուցելու հարցը։

5. Դեպոների պետերը և շոգեշարժային տնտեսության բաժինների պետերը պարտավորվում են մի ամսվա ընթացքում, մրամաքրիչ չունեցող բոլոր շոգեշարժերի հրախողովակներն ու ծխախողովակներն ապահովել հողմահար պիտույքներով (приборами продувки)։ Շոգեշարժային մեքենավարները պարտավորվում են հրախողովակների և ծխախողովակների հողմախաղը կատարել թե հիմնական և թե վերադարձի (оборотный) դեպոներում։

6. Կարգավորել բոլոր շոգեշարժերի մոխրատուփը

7. Դոնեցկու վառելիքով աշխատող շոգեշարժերի վրա կառուցել ՀՃԺԿ-ի կողմից հաստատված գծագրերի (чертеж) համաձայն՝ շոգեխոնավացուցիչներ (пароувлажнители)։ ФД շարակարգի շոգեշարժի համար ըստ № 595 գծանկարի, իսկ Э շարակարգի շոգեշարժերի համար ըստ № 576 գծանկարի։

8. Հերթական վողողումների միջոցին զննել շոգեշարժերի շոգեցամաքիչները (паросушители) և ապահովել նրանց պատշաճ վիճակը։

9. Բոլոր շոգեշարժերի վրա ապահովել ծխատուփերի դռնակների քիպ կցարկումը (плотное прилегания)։

Ստուգել ծխատուփի այրուքը (изгарь) վողողելու վողողիչ խողովակների և ծորակների վիճակը (состояние заливательных трубок) և իբրև կանոն, վողողումը կատարել ինժեկտորից։

10. Զննել շոգեգործ խողովակների միացումները, վերացնել պռունկների (фланец) միջից գոլորշիացու-

մը, վազակին (кожух) տալ պատշաճ վիճակ, ինչպես և դնել յերեսացու (личины)։

11. Դոնեցկու վառելիքով տաքացնելիս սահմանել քառանցք կոնների արանքների հետևյալ տրամագծերը— ՓԴ շոգեշարժերի համար՝ 80—85—90 մմ։ Э շարակարգի շոգեշարժերի համար՝ 65—70—75 մմ, և սովորական կլոր կոնների համար՝ 140—145 մմ։

Դեպոների պետերը պարտավորվում են յուրաքանչյուր վողողման միջոցին, բացի տաք վողողումից, անկախ մեքենավարի գրամուծումից, ստուգել կոնի գիրքը ըստ ծխախողովակի առանցքի։ Կոնուսը պարտադիր կերպով պետք է մաքրվի այրուքից (нагар) և ստուգել սիֆոնի ուղիղ գիրքը։

12. Հերթական վողողումների միջոցին ստուգել շոգեշարժի շոգեբաշխումը և յուրաքանչյուր շոգեշարժ, ստուգումից հետո, ապահովել վերահսկման կարթով (крючок)։

13. Վերացնել յուղամատույցներից (сальник) շոգու քաց թողումը (парение)։

14. Դեպոների պետերին, սույն թվի հուլիսի 1-ին, իսկ շոգեշարժ նորոգող գործարանների պետերին պարտավորել նորոգման բոլոր տեսակների միջոցին, վերականգնել շոգեշարժերի վրա յեղած ջրատաքացուցիչները և աշխատած շոգու ինժեկտորները։

15. Պարտավորել բաժինների պետերին կազմակերպել շոգեշարժերի ծխախողովակներից այրուքի (изгарь) հավաքումը հատուկ արկղների մեջ կամ ածխի պահեստների մեջ դրա համար հատկացրած տեղերում, առանց թույլ տալու այդ այրուքը խառնել խարամի (шлак) հետ։

Առաջին հերթին այրուքը ոգտագործել տեղաշարժական (маневровые) շոգեշարժերում և կայուն կառուցվածքներում (на стационарных установках)։

16. Շոգեշարժային սպասի պետերը յուրաքանչյուր դեպոյում հաստատում են հակատկուցքի (антинакипин) բաշխման կարգը շոգեշարժերին և սահմանելով դեպոյից դուրս յեկող յուրաքանչյուր շոգեշարժին հակատկուցքով ապահովելու համար դեպոյի հերթապահի կողմից պատասխանատվություն։

Յուրաքանչյուր դեպոյի հատկացնել ստորագրման հատուկ գիրք, ուր մեքենավարը մեկնումից առաջ ստորագրում է հակատկուցքի ստացումը։

17. Շոգեշարժային տնտեսության բաժինների պետերը շոգեշարժային կաթսաները հողմահարելու համար կազմակերպում են հսկողություն։ Յուրաքանչյուր դեպոյում սահմանվում է հողմահարումը գրամուծելու համար մի գիրք, վորի մեջ ստորագրում են մեքենավարները։

18. Ճանապարհների պետերը մինչև հունիսի մեկը ստուգելու յեն, թե վոր չափով և համապատասխանում շոգեշարժերի բանվորական սրահը (парк) փաստացի շարժմանը և չթույլատրեն պահել ավելորդ շոգեշարժային տաք սրահ։

Շոգեշարժային սպասի և շարժման պետերին արգելել, վոր նրանք չսահմանեն շոգեշարժ մատուցելու բարձր նորմեր։

19. Շոգեշարժային տնտեսության բաժնի և դեպոների պետերին արգելել ոգտագործել գծային ջերմատեխնիկներին այնպիսի աշխատանքով, վորը կապ չունի նրանց անմիջական պարտականության հետ։

20. Շոգեշարժային սպասի պետերը մի ամսվա ընթացքում անձնապես ստուգելու յեն ճանապարհներում ծառայող ջերմատեխնիկների հաստիքը (штат) և թե վոր չափով է այդ հաստիքը համապատասխանում ջերմատեխնիկներին առաջադրած խնդիրներին։

21. Ճանապարհների պետերը շոգեշարժային սպասներում, վառելիքային ցիրուցան ապարատների փոխարեն կազմակերպում են վառելիքային բաժին, վորտեղ կենտրոնացվում են վառելիքի բաշխման և ոգտագործման ֆունկցիաները, յուղման և վառելիքի պահեստային տնտեսության հարցերը։

22. Շոգեշարժային սպասների յեղած հաստիքի սահմաններում հիմնել ճանապարհի շոգեշարժային սպասին կից վառելիքային բաժնում վերահսկողի պաշտոն, վորի վրա դրվում են վառելիքային և յուղման պահեստները վերաքննելու շոգեշարժերում, ինչպես և այլ կարիքների համար վառելիքի ոգտագործումը ստուգելու պարտականությունները։

23. Ճանապարհների պետերը պարտավորվում են վերը հիշված միջոցառումների առաջին արդյունքը հաղորդել հունիսի 15-ին ՀՃԺԿ-ին, իսկ հետագայում ամեն ամիս շոգեշարժերում, ինչպես և կայուն կառուցվածքներում վառելիքի ծախսման հետևանքը զեկուցել ՀՃԺԿ-ին։

III. ՊԱՀԵՍՏԱ-ՎԱՌԵԼԻՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐԵԼՈՒ ԳԾՈՎ.

1. Ճանապարհների պետերին պարտավորել ցանկափակելու վառելիքային պահեստները, առաջին հերթին հիմնական դեպոներինը, վորի համար մասնակի

ոգտագործել այն գումարները, վորոնք բաց են թողնված 1937 թվի գումարահատկացումով՝ վառելիքային պահեստները կարգավորելու համար։

2. Վառելիքային պահեստների պետերին և ջերմատեխնիկներին պարտավորել վոչ պակաս, քան ամիսը յերկու անգամ վերակշռել վագոնետկաներն ու կոնքերը (бади), այն նպատակով, վորպեսզի ածուխը շոգեշարժերին բաց թողնվի ճիշտ կշռով։

3. Վորպեսզի շոգեշարժերը վառելիք ստանալիս պարապուրդ չունենան, պարտավորել շոգեշարժային տնտեսության բաժինների պետերին, վառելիքը բեռմատույց կրանով տալիս, յուրաքանչյուր գործող կրանի մոտ ունենալ տասից վոչ պակաս կոնք։

4. Վորպեսզի ածուխը պահելիս չփչանա և չկորցնի իր ջերմածնային ունակությունը, պարտավորել վառելիքային պահեստների պետերին մանրակրկիտ կերպով հետևել ածխի դեզերի ջերմաստիճանին, ածուխը պահելու հրահանգի համաձայն։

5. Վորպեսզի մեքենավարներին կշռի մեջ չխաբեն, պարտավորել շոգեշարժային տնտեսության բաժինների պետերին, ածուխը բունկերով մատուցելիս, կատարել հատակագների բունկերների տրամաչափում (калибровка) և սիստեմատիկորեն ստուգել բունկերներով վառելիքի բաց թողման ճշտությունը, իսկ դեպոների պետերը պարտավորվում են ամիսը մեկ անգամ ստուգել տենդերների տրամաչափումը (калибровка)։

6. Շոգեշարժային տնտեսության բաժինների պետերը, իբրև կանոն, յուրաքանչյուր ամիս կատարում են պահեստում վառելիքի իրատեսական ստուգում

(натурная проверка), ստուգումը համեմատելով փաստաթղթերի հետ։

Ստուգման տվյալները ներկայացնել յուրաքանչյուր ամիս ճանապարհի շոգեշարժային սպասին։

7. Շոգեշարժային տնտեսության բաժինների, ինչպես և վառելիքային պահեստների պետերին պարտադրել կազմակերպելու վառելիքային պահեստների (կրանների և եստակադների) մեխանիկական սարքավորման աշխատանքի և նորոգման համար տեխնիկական հսկողություն։ Սարքավորման վիճակի հսկողությունը հանձնել շոգեշարժային տնտեսության բաժնի ինժեներներից մեկին։

8. Ածխամատույց ծորակների և եստակադների տեխնիկական զննումների համար պահել ժապավինած գիրք (шнуровая книга)։ Շոգեշարժային տնտեսության բաժնի պետին պարտավորել յուրաքանչյուր ամիս կատարել տեխնիկական սարքավորման զննում և զննումների հետևանքը գրամուծել ժապավինած գրքի մեջ, ըստ վորում պարտադիր կերպով ստուգվում է առաջուց կատարված գրամուծումների կատարումը։

Կրանների և եստակադների հանձնաժողովային տեխնիկական զննումը կատարել տարեկան մեկ անգամ յերբորդ յեռամսյակում։ Զննման հետևանքը ձևավակերպել տեխնիկական ակտերով։

9. Յուրաքանչյուր ածխամատույց կրանի և եստակադի վրա ամրացնել հետևյալ տեղեկությունները պարունակող ցուցիչը, վորը ցույց և տալու կառուցման կամ պատրաստման տարին, թույլատրելի բեռնավորումը տոններով, վերջին հանձնաժողովային տեխնիկական զննման ժամանակը։

10. Շոգեշարժային տնտեսության բաժինների պետերը սույն թվի 2-րդ և 3-րդ յեռամսյակի ընթացքում ապահովում են կրանները սպասարկողների մեջ տեխմինիմումի ուսուցումը։

IV. ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԵՋ ՄԱՆՑՈՎՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԳԾՈՎ

Շոգեշարժային տնտեսության բաժինների պետերին պարտավորել, ապահովելու շոգեշարժերի աշխատանքը բոլոր տեսակի ածուխներով, գլխավորել մեքենավարների մեջ բոլոր տեսակի ածուխներով ընթանալու շարժումը և այսպիսով մինչև վերջ ջախջախել խորը արմատ նետած այն կարծիքը, վոր իբր թե կարելի յե աշխատել միմիայն պարարտ (жирный) և գազային ածուխների խառնուրդով։ Սրա հետ միասին, պարտավորել շոգեշարժային տնտեսության բաժինների պետերին, պահեստում բազմատեսակ ածուխ լինելու դեպքում, վոր նրանք ապահովեն ածուխների հետևյալ խառնուրդները։

I. Դոնեցկու վառելիքով աշխատող նամբորդական շոգեշարժերի համար

1-ին խառնուրդ—20 տոկ. կպչող քարածուխ (ПЖ կամ ПС մարկայի), 20 տոկ. գազային քարածուխ (Г մարկայի) և 60 տոկ. վորևե մարկայի անտրացիտ կամ նիհար քարածուխ (Т մարկայի)։

2-րդ խառնուրդ—20 տոկ. կպչող քարածուխ (ПЖ մարկայի), պլյուս 20 տոկ. պոդմոսկովյան քարածուխ և 60 տոկ. վորևե մարկայի քարածուխ։

3-րդ խառնուրդ—նիհար կամ АК քարածուխ՝ 70

տոկ., պլյուս 15 տոկ. կպչող քարածուխ (ПЖ կամ ПС մարկայի), 15 տոկ. պոդմոսկովյան կամ գազային քարածուխ։

II. Ձեռքի տաքացման ապրանքային շոգեշարժերի համար

1-ին խառնուրդ—20 տոկ. կպչող քարածուխ (ПЖ կամ ПС մարկայի), պլյուս 20 տոկ. գազային (Г մարկայի) կամ պոդմոսկովյան, պլյուս 60 տոկ. АРШ (շտիբով անտրացիտ կամ նիհար (Г մարկայի)։

2-րդ խառնուրդ—25 տոկ. կպչող քարածուխ (ПЖ մարկայի) և 75 տոկ. АРШ (շտիբով անտրացիտ)։

3-րդ խառնուրդ—80 տոկ. նիհար քարածուխ (Т մարկայի) կամ АРШ (շտիբով անտրացիտ) և 20 տոկ. կպչող կամ գազային ածուխ։

III. Ստոկերային տաքացումով շոգեշարժերի համար

1-ին խառնուրդ—50 տոկոս գազային քարածուխ (Г մարկայի), պլյուս 50 տոկ. АМ (անտրացիտի մանրունք) կամ АС (հատիկավոր անտրացիտ) կամ АРШ (շտիբով անտրացիտ)։

2-րդ խառնուրդ—50 տոկ. Д (յերկարաբոց), 50 տոկ. (անտրացիտի մանրունք) կամ АРШ (շտիբով անտրացիտ) կամ АС (հատիկավոր անտրացիտ)։

3-րդ խառնուրդ—40 տոկ. գազային (Г մարկայի), պլյուս 20 տոկ. պոդմոսկովյան, պլյուս 40 տոկ, АМ (անտրացիտի մանրունք) կամ АРШ (շտիբով անտրացիտ) կամ АС (հատիկավոր անտրացիտ)։

4-րդ խառնուրդ—բոլոր մարկանների անտրացիտ 75 տոկ., Д կամ Г մարկայի (յերկարաբոց կամ գազային)—25 տոկ.։

Շոգեշարժային տնտեսության բաժինների և վառելիքային պահեստների պետերը, առաջնորդվելով վերը ցույց տված խառնուրդներով, վորոշում են այդ խառնուրդներից ամենաշահավետը, հաշվի առնելով վոչ միայն պահեստում յեղած նմուշները, այլ նրանց մոտավոր նմանությունները։

ПС մարկայի «Յունի կոմմունար»-ը, խառնուրդի մեջ համարել նիհար քարածուխ։

Ձեռքով տաքացնելիք ապրանքային շոգեշարժերի յերրորդ խառնուրդի մեջ նիհար քարածուխ խառնելիս, յեթե պահեստում Ռյասնայա կայարանից բերած նիհար քարածուխ կա, վերջինից մուծել հիշված խառնուրդի մեջ 60 տոկ. վոչ ավելի։ Պակասորդ 20 տոկ. լրացնել մյուս մարկայի քարածուխներից։

Դյուրահալ մոխրով անտրացիտը, իբրև կանոն, պոդմոսկովյան քարածուխի հետ գործադրել յեռակի խառնուրդով, յեթե պահեստներում կա պոդմոսկովյան քարածուխ, ճանապարհների, շոգեշարժային սպասների, շոգեշարժային տնտեսության բաժինների և դեպոների պետերը վառելիքի ծախսի տնտեսումը պետք է համարեն իրենց համար առաջնակարգ խնդիր։

ՀՇԺԿ-ի շոգեշարժային տնտեսության կենտրոնական վարչության պետի տեղակալ Բորիսովին պարտադրել ներկա հրամանի ստուգման կազմակերպումը։ Հետևանքները յուրաքանչյուր ամիս զեկուցել ինձ։

Հաղորդակցության ճանապարհների
ժողովրդական կոմիսարի տեղակալ՝ ԼԵՎԶԵՆԿՈ

Շոգեշարժային տնտեսության կենտրոնական
վարչության պետի տեղակալ՝ ԲՈՐԻՍՈՎ

Ներկա հրամանի հրատարակումով վերանում են 1933 թվի հոկտեմբերի 16-ի № 422/ц և 1934 թվի փետրվարի 13-ի № 27/ц հրամանները։

ՇՈԳԵՇԱՐԺԱՅԻՆ ՎԱԳՈՆՆԵՐԻ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԹԱԼԽՄԱՆ ՆՈՐՄԵՐԸ

№ գծի կարգի	ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ	1937 թվի II կվարտալի նորմերը	1937 թվի նորմերը
1	Կիրովյան	190	214
2	Հոկտեմբերյան	216	229
3	Կալինինի	232	234
4	Արևմտյան	232	265
5	Բելոռուսյան	215	221
6	Հյուսիսային	159	181
7	Յարոսլավյան	248	261
8	Գորկովսկու	200	211
9	Լենինյան	220	235
10	Կազանյան	207	217
11	Մոսկով.-Շրջապտույտ	263	296
12	Ընկ. Ֆ. Ե. Ջերժինսկու անվան	271	272
13	Մոսկվա-Կիևյան	236	238
14	Հարավային	240	248
15	Դոնեցկու	253	268
16	Ստալինյան	252	260
17	Հարավ-Արևմտյան	250	267
18	Ոդեսայի	250	270
19	Մոսկվա-Դոնբասյան	272	292
20	Հարավ-Արևելյան	235	277
21	Ստալինգրադի	242	284
22	Կ. Ցե. Վորոշիլովի անվան	233	249
23	Որջոնիկիձեյի	190	201

4075

№№ ըստ Գծագրի	ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ	1931 թվի II կվարտալի նորմերը	1937 թվի նորմերը
24	Անդրկովկասյան	293	306
25	Ռյազան-Ուրալյան	265	308
26	Ընկ. Վ. Վ. Կույբիշևի անվան . .	219	253
27	Որենբուրգյան	228	238
28	Թուրքեստ.-Սիբիրյան	205	222
29	Տաշկենտի	240	240
30	Աշխաբաթինը	296	315
31	Լ. Մ. Կագանովիչի անվան	207	245
32	Հարավ-Ուրալյան	212	259
33	Ոմսկու	149	153
34	Տոմսկու	221	255
35	Կրասնոյարսկու	237	250
36	Արեվ.-Սիբիրի	202	233
37	Ընկ. Վ. Մ. Մոլոտովի անվ.	257	263
38	Ամուրյան	283	315
39	Հեռավոր-Արևելյան	236	252
	Ցանցերում . .	225	246

Շոգեշարժային տնտեսության կենտրոնական վարչության պետի տեղակալ՝ ԲՈՐԻՍՈՎ

ՀՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի Գրադարան
ՀՍՍՀ ԳԱ

ՀՀ Ազգային գրադարան
NL0222950

55.143
37.949

ПРИКАЗ

Народного Комиссара Путей Сообщения

О мерах по экономии топлива